

— Վենետիկի մէջ, Իտալիոյ Մարգարիտա Թագուհւոյն հովանւոյն ներքեկազմուած է Յուցահանդէսը Ուրբազան Արտեստներու, ի տես դրուած են եկեղեցական սպասներ, նկարներ, արձաններ: Յուլիս 12ին տեղի ունեցաւ բացումը. փառահեղ դահլճի մը մէջ՝ որմէն աւելի գեղեցիկ չըջանակ կարելի չէր երեսակայել նկարուած և իրական բազմութեան՝ հաւաքուած էր Վենետիկոյ քաղաքական և եկեղեցական բոլոր պաշտօնութիւնը. ազնուապետական դասակարգը ինքզինքը ցուցահանդէսի դրած է. նուազախումբը կը հնչէ և ամբողջ կը ճեղքուի անցք տալու համար նահանգապետին, կարօնիալին, «Հայոց արքեպիսկոպոսին», որ Ս. Ղազարէն հրաւիրուած է յատկապէս: Ենքի սանդուխին վրայ՝ արձանի մ'առնէ՝ բացման ճառը կ'ընթեանու Յուցահանդէսի կազմակերպիչը՝ ասպետ Ակացցի յետոյ միշտ ճառեր, ուր կը փառաբանուին գեղարուեստը՝ կրօնական ներշնչմամբ ազնուացած՝ Արարողութիւնները կ'աւարտեն և հարտիրակներու առանձնաշնորհեալ մաս մը միայն կ'առաջնորդուի՝ զինուորներու ընկերակցութեամբ՝ Յուցահանդէսին այցելելու: Առաջին սենեակին մէջ կանգնած է (սպիակի մէջ) մոմէ եպիսկոպոս մը՝ լատինական գգեստներ հազած. պէտք չունէին անոնք հիփցած ըլլալու՝ անշուք երևեալու համար: Եւրօլը մի քանի եկեղեցական սպասներ՝ գուրդ գրաւել երկուսի: Ենքիսպականները երկրորդ սենեակը կը մտնեն. մէջտեղը կանգնած է արձան մը՝ հայ եպիսկոպոսի մը տարազը կրելու սահմանուած. թիկունքին վրայ ունի կարմիր մետաքսէ շուրջառ մը, վրան յաղթական կան կերպով կը բողբոջին ու կը զաւարտուին ոսկիէ փայրով ծաղիկներ. արևելեան արքունիքի շաշալութիւնը կը զգացուի այս կրօնական տարազը տեսած պահուր. գլխուն վրայ կը կրէ բարձր, ականակուտ, ոսկեհիւս միհրական թագ մը՝ միթիթալ՝ որ մտածել կու տայ հին պարթև քուրմին՝ որ Մհրայ բազինը կը դիմէր. ձեռքին մէջ կը կրէ արծաթափայլ հարցական ձեռք գալազանը, որ կը թուի ըսել. «Վսեմ չեմ: Հողաթափները ծիրանեգոյն են և ոսկեթելով պնտուած», Պոլիոպոսի նկարագրած հայկան նախարարներու կոշիկներուն նման: Ուրբէն առջև՝ փուտած է աւետարանի մը լաթը՝ անգիրտ բանուածքով: Սենեկի որմերուն վրայ ապակիներուն մէջ ի ցոյց դրուած են Անիի հնացած կանթեղ մը, ոսկեղբուսգ սկիհ մը, հայ սարկաւազի մետաքսեայ շապիկներ, քոշոցներ... Այս ամէնը եկեղեցական առարկաներ են, պիտի ըսէ կէս-ուտեալ մը. բայց մեր տարազներու բոլոր յորինուածքը գիծերու այնպիսի փափուկ ուշադրութիւն մը, գոյներու այնպիսի երիտասարդական կենդանութիւն ցոյց կու տայ որ անոնք կ'ապացուցանեն գեղարուեստի յորդ զգացումը մեր ազգին մէջ, և կը պատկերեն հին-արեւելեան ազնուականութեան կենսերը:

— Պերլինի այս տարուան Գեղարուեստական Յուցահանդէսին մէջ ուշագրաւ մասնակցութիւն մը ունեցեր է դարձեալ՝ տաղանդաւոր նկարիչ Պ. Վարգար Մախոեան, մեծադիր նկարով մը որ ձմեռնային իրիկնամուտի տեսարան մը կը պատկերացնէր, Պերլինի շրջակայքը: Անոնք որ գաղափար ունին թէ որքան զոտար է օտար աբրուեստագէտի մը համար՝ եւրոպական այս կարգի պաշտօնական Յուցահանդէսներուն մէջ ընդունուիլ և մասնաւոր գնահատել տալ իրենց գործը, բայց պիտի ըմբռնեն Պ. Մախոեանի վրձնիկն անվիճելի կարողութիւնը: Միեւնոյն ժամանակ, երիտասարդ արուեստագէտը՝ իրեն ուղղուած յառուկ հրաւերի մը համաձայն՝ իր լուսազոյն ներկայներուն մէջ ցուցադրութիւնը կատարեր է Համադրակի առաջնակարգ վեպ սալօնին մէջ: Այդ նկարները բարձր գինով վաճառուելէ զատ, առնուց հեղինակը գերման թերթներուն դրուատալից տողերը վայելելու բազմը ունեցեր է: Մասնաւորապէս Համադրակիի Քոյախիօստեկը և Համադրակիի Ֆրէմուրդայար գեղարուեստական ուսումնասիրութիւն մը հրատարակեր են Մախոեանի գեղարուեստական արտաբանութեան վրայ, անոնցմէ առաջինը մինչև իսկ բազողաութեան դնելով հայ արուեստագէտին նշանաւոր պատկերահանի մը նկարներուն հետ որոնք ցուցադրուած են միեւնոյն սալօնին մէջ:

(Սուրճաւերակ)

— Պօլտոյ մէջ անցեալ շաբթու մեծած Պօլտոյ նշանաւոր ճարտարագէտ ճարտարապետ Յուլիսի Էմին, որ իր ուսումը ստացած էր Վենետիկի Մուրատ-Սափայէլեան վարժարանին մէջ յետոյ շարունակած էր աւելի բարձր ուսում առնել իտալական բարձրագոյն վարժարաններու մէջ: Այս գիտուն և հանճարեղ հայը, որ Պօլտոյ մէջ կարգ մը յայտնի շինութիւններու կառուցողն է եղած, գիտ մըն ալ ըրած էր իր մահէն առաջ, այն է միշտաբ սկաւառակով ֆոնտկրաֆի մը գիւտն, որ կրեալ առանց փոփոխման գործել 16 ժամ և արձանագրել դատական, ժողովական և բեմբասացական ամենէն երկար թօսքերը. այս է տիրեցնական աշխատութիւնը մեծ պատիւ կը բերէ հանգուցելոյն և հաւասարապէս այն ցեղին, որուն ինք կը պատկանի:

(Լուսաբեր)

— Թիֆլիզի Կերսիսեան դպրոցը, զոր ծանօթ բարերար Պ. Մանթաշեան յանձն առած էր վերաշինել, պիտի շինուի Տիկին Կատրինեանի կողմէ ներուրում 20 տէսիաթին գետնի վրայ, որու կէտը դպրոցին պիտի յատկացուի, կէսն ալ հասուլթաբէր կալուածներու:

Եւրօլի Հայրապետ Ղազարեանը 2,000ական ռուբլի կտակած է Զահեդուրի Տաթևի գիւղի Հայոց և Կովկասի բարեգործական ընկերութեան Եւրօլի ճիւղին:

Աւետարներ

— Մայիս 30ին Արտիստիկ Ընկ. դահլճում... Ե. Մառ կարգաց Արարողքի տաճարի և իր ան-

ցեալ տարւայ կատարած Անույ միջնաբերդի պե-
ղումներէ մասին մի շատ հետաքրքիր դատախո-
սութիւն... Պիտի պեղել և 2-3 տարի առաջ
Պ. Թորոմանեանի նշմարած մի ճոխ գեղարուես-
տական հրաշայի պալատ՝ բազմաթիւ քանդակ-
ներով ու մուգայիքներով զարդարուած: Այդ չէն-
քը գտնուեց և Արագածից եկեղեցու Արեւելեան
կողմը: Պոռֆ. Մառ արդէն սկսել է Անիում իր
աշխատանքները:

(Յուշարար)

— Հնդկաստանի կալիկաթ քաղաքին մէջ
վերջերս մեռած է մեծահարուստ ազգային մը
Պ. Յովսէփ Պողոսեանեան, որ բարեգործական
նպատակով 300,000 ռուբլի (35,000) ոսկի ձգած
է: Այդ գումարին մէջ մասով պիտի հաստատուի
եւրոպական գրութեամբ գեղեցիկ հիւանդանոց
մը, որուն վարիչները ընտրուած են արդէն:

(Արեւիք)

— Ֆրանսական Լը Թան առաջնակարգ թեր-
թը իր 17195 թուի խմբագրականովը որ «Կով-
կասու մէջ» վերնագիրն ունի՝ կը խօսի նաև
Ռուսաստանի մասին:

«Առանց իրենց երկրէն դուրս ելլալու, Ռու-
սերը մտածելու ուրիշ կէտեր ունին: Կայ ամե-
նէն առաջ հայկական շարժումը, որ յառաջ ե-
կած է ոչ միայն ռուսաց անճարակ մատակա-
րարութեան զգոռումներէն, այլ նաև յեղափո-
խական հնարագիտութիւններէն: Կալիքին զօրա-
մարտ, ամենէն վերջին կառավարիչը որ կովկասը
վարակարարած ըլլալ՝ փոխաբայութեան վե-
րահաստատումէն առաջ, ճնշող միջոցներ ձեռք
առած էր՝ ընդդէմ կարողիկոսին և հայ եկե-
ղեցւոյ զիլաուրներուն՝ որ ամբաստանուած էին
իբր հակառուսական անջատական մեքենայու-
թիւնները գործող: Այս միջոցները կը ձգտէին
հայ եկեղեցւոյ բարիքները ռուսական գաղտնի
փոխանցելու: Սկսեալ 1904ին, այսինքն ան-
յարմար ժամանակ, որովհետև խռովութեանց
թուականը քիչ աւելնէն պիտի բացուէր, և ռու-
սական մատակարարութիւնը գինեակի վիճակի
մէջ պիտի ըլլար, իբր առաջին հետևանք ունե-
ցաւ կալիքիին բռնի մահը և լքումը իր հայկա-
կան քաղաքականութեան որ անկարելի դարձած
էր իր յաջորդին: Միևնոյն ժամանակ՝ կովկա-
սեան անջատականութեան գաղափարը, որուն
քարոզողն էր հայկական մատուորակառութիւնը՝
Դաշնակցութեան ընկերութեան որդեգրուած՝
բայց յառաջադիմութիւններ կ'ընէր: 1905ին հա-
մազգայնոր մը՝ Թիֆլիսի մէջ կազմուած՝ փափագ
կը յայտնէր որ կովկասու մատուորակարարութիւնը
յանձնուի խառն հանգամանակով մը (ՏԵԹ)
ուր կովկասեան բոլոր ազգութիւնները՝ իրենց
ներկայացուցիչներն ունենային, և նախարա-
րութիւն մը՝ որ այս նահանգաժողովին առջև
պատասխանատու ըլլար: Ռուսական գերիշխա-
նութիւնը պիտի կայանար այսպէս միայն մաք-
սեբուն, դրամներու և ազգային պաշտպանութեան
մէջ: Ճիշդ այն ժամանակն էր՝ յորում յեղա-
փոխական խառնաշփոթումը չլիքայագիւրծ կը
սուրբար կովկասու վրայ: Թաթարներն և Հայե-

րը՝ խառն նահանգաժողովի նախերգանքը կ'ը-
նէին՝ զիրար շարքելով Բագուի փողոցներուն
մէջ: Գալով վրացիներուն, սկիզբէն աչկան
կ'երևար թէ Հայոց հետ միացած են. բայց չու-
տով Քուլթայի և Ռեզուկէթ գաւառներու մէջ
տեղի ունեցած յուզումները զուտ ազգարակայն
նկարագրի մը տառացի և թէպէտև նոյնքան
բուռն էին որքան Եուշին և Գանձակի աչկորդ
անկարգութիւնները, բայց կը ձգտէին դէպ ի
տեղական ընկերավարութիւն, զատուելով Դաշ-
նակցութեան բանաձևերէն: Ի զուր Թամիշիլի
վրացի ընկերավարականը կ'աղաղակէր առաջին
Դումանի բեմէն. «Ամէն ազգի բանուորները, միա-
ցե՛ք: Եստե՛ն էր՝ որ միութեան կողմ պիտի
չստէր և թէ ռուսական վարկի նուազումը՝
կովկասի մէջ՝ մէկ մէկու դէմ գինած էր այն
ազգութիւնները որ մինչև ցարդ խաղող կ'ա-
պրէին՝ ռուսական գերիշխանութեան տակ: Այն
ժամանակէն ի վեր՝ ռուսական գունդերու մի-
ջամտութիւնը քիչ քիչ նիւթական կարգը վերա-
հաստատեց. ապաստամբութիւնը դեռ է զարթած:
Այս բանս կարելի է դատել յեղափոխականնե-
րու այն բազմութենէն՝ զոր վրացիները ուղար-
կեցին ինչպէս նաև առջի երկու Դու-
մային»:

(Լը Թան)

— Յուլիս 23ին տեղի ունեցաւ Թիֆլիսի ժուր-
նալիստների և գրականագետների (« Գրագէտ-
ների» ժողովը. նախագահում էր տ. Գորնոստան-
ւան: Ժողովը՝ ծանօթանալով ընկ. հաստատու-
կանոնադրութեան հետ՝ անցաւ կազմակերպա-
կան բնոյթ ունեցող ինդիւիդներին: Կանոնադրու-
թեան համաձայն պէտք է ընդհանուր ժողովը իր
միջից ընտրէր 5 անձնապատկերին ընկ. բոլոր
գործերը ղեկավարելու համար: Բայց ընդհ. ժո-
ղովը ընտրեց միայն մի ժամանակաւոր կոմիտէ
3 անդամից բաղկացած: Կոմիտէի անդամ ըն-
տրուած են՝ Լ. Կիպիանին, Պ. Գեւրջիլիին և
Ա. Ստավրովսկին:

— Կովկասի Հայոց Բարեգործական Ընկերու-
թեան կազմուելու իր վերջին նիստերից մէ-
կում որոշել է կովկասահայերի համար բանալ
մի շարք երկրասեան և միդասեան եկեղեցական
տարրական դպրոցներ: Այդ դպրոցները բացի
զուտ գրագիտական ինքնուր կ'ունենան նաև գիւ-
ղատնտեսական և արհեստագիտական բաժիններ:
Դպրոցները կը բացւեն այն վայրերում, ուր ժո-
ղովրդըը հնարանորութիւն չունի բանալ դպրոց
սեփական ծախսերով կամ տեղական հասարա-
կութիւնը իր միջոցներով կը ծածկէ դպրոցի
բիւջէի գոնէ 50 տոկոսը: Առաջիկայ ուսումնա-
կան տարւոյ ընկերութիւնը կը բանայ 2 երկ-
դասեան, 8-ը միդասեան դպրոցներ, որոնց հա-

ՔԱՌՈՒԹԻՒՆ քերթուածին մէջ (Բզմ. յուլ.
315) Անապատս կարդալ Անապատ, Անապիւր =
Անապիւր, զընդից = կընտից, կաց = ձեանց,
օհ = օծ, Լուստսըն = Լուստըն, օտարօտի =
օտարաբար, նորուն = նոցուն, աքեաց = անեաց,
դեւ = դէւ, և այլն:

մար պէտք է ծխխուրի 8000 ռուբլի: Ընկերու-
թիւնը կը նպաստէ նաև 50 դարոցի՝ նրանց ծախ-
քերը, 7000 ռ. վճարելով: Այդ դպրոցներին
8-ը երկդասեան են, իսկ 42-ը միդասեան:
Երկդասեան դպրոց պահելու համար՝ փրկատն-
ւեսական և արհեստագիտական մասով՝ ծախք
կը լինի 5000 ռ.: Այսպիսով Բարեգործական
ընկերութիւնը կը նպաստէ 60 դարոցի և դրա
համար տարեկան ծախք կունենայ 30,000 ռ.:
Դպրոցներին մի մասը կը բացի Պետերբուրգի
հայոց եկեղեցական խորհրդի միջոցներով: Այդ
հաստատութիւնը Բարեգործ. ընկ. տրամագրու-
թեան տակ 15000 ռ. է գրել:

(Վտակ)

— Թարիզի հայութեան կրթութեան նա-
խաձախողը տարրը հետաքրքրում է և աշխա-
տում, որ Թարիզում՝ Արարատականի սրտում,
հիմնէ այդ կուլտուրական հաստատութիւնը (=
Արարատականի կենդրոնական դպրոց).... Ամ-
բողջ տասնեակ տարիներ բազմաթիւ խորհրդակ-
ցութիւն է կատարուել այդ խնդրի շուրջը և
Մուրատեան Ծ. վարդապետի օրով՝ նորին յի-
շեպի ժաշան աշխատութեան, վերոյիշեալ դը-
պրոցի գործը տեսական հողից անցնում է գործ-
նական հողի վրայ.... Վստահօրէն կարող ենք
ասել՝ որ այս ստուգնական սեզոնին դպրոցը կը
բացուի. առայժմ ներկայ տարւոյ համար որոշ-
ւած է 8000 ռուբլի մի բիւզժէ, որը լիայոյս ենք
Թարիզի հարուստները կը վճարեն մինչև հիմա-
կան դրամազօտի հաստատումը կամ ձեռք բե-
րելը, որի համար կարապետ վարդապետը ա-
ռաջարկել է նւիրատութեան զիմը Ռուսիայի
պարսկահայերին.... Նրազիր մշակողները պէտք

է աշխատեն այնպէս յարմարեցնել, որ ամբողջ
Արարատականի մեր դպրոցները՝ ծրագրի ներ-
դաշնակութիւն ունենան, որպէսզի աշակերտների
ընդունելութիւնը չդժուարանայ և աշակերտու-
թիւնը՝ համահասարակ ընթանայ»:

(Լյարիւր - Աստրախան)

— Լոնտոնէն գրած են մեզ հետեւելը. «Տա-
րիէն աւելի է որ Եւրոպայի Գեր. Ա. առաջնորդը
Լոնտոն գրկած է Արժ. Տ. Մետրոպ քահանայ
Տ. Մետրոպեանին իբրև հոգևոր հովիւ տեղւոյս
ազգայինոց՝ որք յոյժ գոհ մնացած են իր բարւոք
պաշտօնավարութենէն: Երբ Գեր. Առաջնորդն
ասկէ քիչ ժամանակ առաջ Լոնտոն եկած էր,
ժողովուրդի յայտնած փափաքին համեմատ ազ-
գային սեփական եկեղեցի մ'ունենալու համար
Յանձնախումբ մը կազմեց և կոնդակաւ յանձնեց
անոր ժապարհնալ տոմար մը: Իրաւ է թէ ես
սկզբամբ հակառակ եմ Եւրոպայի մէջ նոր ե-
կեղեցիներ ունենալու զաղափարին. բայց քանի
որ, կամայ թէ ոկամայ՝ բաւական թուով հայ
զաղութ մը կազմակերպուած է արդէն այստեղ,
Յանձնախմբի նպատակն ալ գովելի է և քաջա-
լերութեան արժանի»:

(Ամենիւս)

— Նոր լոյս տեսած հայ թերթեր. Զանգակ,
յաջորդ Վտակի, որ 1300 ռուբլի տուգանքին
ենթարկուելէն յետոյ՝ դադարեցաւ. Նոր դպրոց
հայ ուսուցիչներու և վարժուհիներու հրատա-
րակած մանկավարժական լուրջ և բազմազուտ
թերթ, Մուրակ, Արև. եգիպտահայ օրագիր հրա-
տարակուած Եգիպտոսի նորակազմ Հրատարակ-
չական ընկերութենէն:

ՍՏԱՅՈՒԱԾ ԳՐԲԵՐ

ՆԱՄԱԿԱՆԻ

Archag Tchobanian. - Pomées (Auro-
re. - La caravane des heures. - An-
goisses. - Visions. - Dans la nuit. -
Sur la colline). Traduction française.
Préface de Pierre Quillard. Paris, So-
ciété du Mercure de France. XXVI, rue
de Condé, 1908. Prix 3 fr. 50.

G. H. Paschayan-Khan. - La litté-
rature arménienne concernant l'hygiène
scolaire pendant l'année 1907. Leipzig.
Wilhelm Engelmann. 1908.

— Les écoles persanes. Leipzig. En-
gelmann. 1908.

ՀԱՄԱՐՆԵԱՆ. - Կեանքի վէպը. Թիֆլիս. տպ.
չերմեթի. 1908. գին՝ 75 կոպէկ:

Ա. ՅԱԳԱՐԵԼԻ. - Սիբիրական. կով. 4 գոր-
ծող. - Թրգմ. Գ. Միրազեան. 1908. Թիֆլիս.
գին. 50 կոպէկ:

ԱՆԻԿԻ գրադարան. - Վերագնահատումներ .
Թիֆլիս. 1908. գին՝ 1 ռուբլի:

ԵՐՈՒՍՈՂԷՄ Ա. Գ. 2. - «Կարծիք» և «Կեղ-
ծիք» բառերու ստուգաբանութեան շուրջ
գրածնոր շահեկան է, իսկ միւս պ.ին «Շի-
լէր» թարգմանութիւնը՝ անհրապոյր:

ՊՈԼԻՍ Խ. Բ. - Յաջորդ ամսոյն կը սկսինք պո-
սական թերթերու ծանուցումները հրատա-
րակել: Ազատութեան շրջանը՝ կը յուսանք
նոր կապ և սիրալիք յարաբերութիւններ
պիտի հաստատէ հայ թերթերու մէջ:

ԽՄԲ. ՎՏԱԿԻ. - Քիւրտերէնի այբուբեն հնա-
րեւոյ ձեռնարկը օգտակար է. բայց պ.ին՝
որ Բերդեղեան Ս. Մետրոքը բլլալ կը փա-
փագի՝ անծանօթ կ'երեւի Justit «Diction-
naire kurde-français»:

ՄԻՆԴՐԱՆ ԳՐԻԳՈՐ ՔԱՍԱՊԵԱՆ, հրատարա-
կած է անգլիերէնի՝ 545 էջով երկ մը Աշտնիք-
նեան ճառապայթներու՝ և երկտարաբուծութեան
վրայ. այս Գրքը պատիւ պիտի բերէր եւրոպայի
ամենէն առաջնակարգ գիտնականին անգամ: